Սիլվա Գևորգյան

1944 թ. ՀԽՍՀ ԱՐՏԳՈՐԾԺՈՂԿՈՄԱՏԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԱՋԴԱԿ

Բանալի բառեր – ԽՍՀՄ, ՀԽՍՀ, արտգործժողկոմատ, ԱՕԿՍ, քաղաքական բաժին, վերահսկողություն, գիտամշակութային միջոցառումներ, արտաքին կապեր:

Մշակույթի ու գիտության բնագավառում Խորհրդային Հայաստանի ձեռքբերումները ուղեկցվում էին խորհրդային մյուս հանրապետությունների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների հետ արտաքին գիտամշակութային կապերի հաստատմամբ: Գիտամշակութային կապերը դրական դեր էին կատարում ու նպաստում հանրապետությունում այդ ոլորտների զարգացմանը: Արտասահմանյան երկրների հետ գիտամշակութային կապերի ընդլայնման գործում հաջողություններ գրանցվեցին հատկապես հետպատերազմյան տարիներին, ինչը պայմանավորված էր նաև Հայրենական պատերազմի ավարտական փուլում՝ 1944 թ. սկզբին, ՀԽՍՀ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատի ստեղծմամբ:

Հարկ է նշել, որ Խորհրդային Հայաստանը մինչև Անդրդաշնության և ԽՍՀՄ կազմավորումը ուներ որոշակի ինքնիշխան կարգավիճակ: Հանրապետությունը 1920-1922 թթ. միջպետական հարաբերություններ ու առևտրատնտեսական կապեր էր հաստատել ինչպես խորհրդային հանրապետությունների, այնպես էլ արտասահմանյան մի շարք երկրների և միջազգային կազմակերպությունների հետ: Սակայն Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության ու ազգային մյուս խորհրդային հանրապետությունների ինքնուրույնությունը արտաքին քաղաքականության հարցերում ժամանակի ընթացքում հետևողականորեն վերացվեց[1]: Արդեն 1922 թ. հուլիսի 3-ի որոշմամբ ՀՍԽՀ Կենտրոնական գործադիր կոմիտեի արտաքին գործերի ժողկոմատի լուծարումով ավելի քան մեկուկես տարվա գործունեությունից հետո իր գոյությունը դադարեցրեց Խորհրդային Հայաստանի պետականությունը խորհրդանշող հիմնական մարմիններից մեկը[2]: 1922 թ. ԽՍՀՄ կազմավորման մասին պայմանագրի կնքումից հետո խորհրդային հանրապետությունները զրկվել էին արտաքին քաղաքականության ասպարեզում իրենց ունեցած լիազորություններից. պաշտոնապես արտաքին քաղաքական գործունեության իրավունքը բոլոր հանրապետություններից փոխանցվել էր կենտրոնին՝ Մոսկվային: Այդ իսկ պատճառով 1920-30-ական թթ. գիտամշակութային արտաքին կապերի միայն մի քանի իրադարձություն կարելի է առանձնացնել: Հատկանշական է խորհրդահայ նկարիչների մասնակցությունը 1924 թ. Վենետիկում կազմակերպված գեղարվեստական ցուցահան-

[1] Տե՛ս Խաչատրյան Կ. Հ., Հայ-ռուսական հարաբերությունները 1920-1922 թթ., Ե., 2007, էջ 164:
[2] Տե՛ս Սուքիասյան Հ. Կ., Խորհրդային Հայաստանի դիվանագիտական կապերը 1920-1922 թթ., Ե., 2014, էջ 8:

դեսին, 1928 թ. Մ. Սարյանի աշխատանքների ցուցահանդեսը Փարիզում, հայտնի ֆիզիոլոգներ Լ. Օրբելու և Խ. Կոշտոյանի մասնակցությունը ֆիզիոլոգների միջազգային համագումարին ԱՄՆ-ում, Իտալիայում և այլն[1]:

Վիճակը փոխվեց Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտական փուլում. մի ժամանակաշրջան, երբ Խորհրդային Միությունում կարևոր նշանակություն էր տրվում բոլոր ուժերի հավաքագրմանը: Խորհրդային իշխանությունները սկսեցին քարոզչական մեծ աշխատանք իրականացնել ինչպես երկրի ներսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Պատերազմի այդ փուլում անհրաժեշտություն առաջացավ արտաքին կապեր հաստատել թե՛ Հայկական սփյուռքի, թե՛ առհասարակ օտարերկրյա պետությունների հետ: 1944 թ. ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը միութենական հանրապետություններին, այդ թվում նաև Հայկական ԽՍՀ-ին շնորհեց արտաքին քաղաքական լիազորություններ, ինչը հանրապետությունների ինքնիշխանության ձեռք բերման տպավորություն էր ստեղծում: Այս որոշումն ընդունելիս, անշուշտ, Խորհրդային Միությունը ուներ որոշակի հեռահար նպատակներ:

1944 թ. փետրվարի 1-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 10-րդ նստաշրջանում ընդունվեց միութենական հանրապետություններին արտաքին քաղաքականության ոլորտում լիազորություններ տրամադրելու և դրա հետ կապված արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատը համամիութենականից միութենական-հանրապետական ժողովրդական կոմիսարիատների վերափոխելու մասին օրենք: Այն ուներ հետևյալ բովանդակությունը. «Հաշվի առնելով միջազգային կապերի ընդլայնման և այլ պետությունների հետ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության համագործակցության ամրապնդման և միութենական հանրապետությունների՝ արտասահմանյան երկրների հետ անմիջական հարաբերություններ հաստատելու աճող անհրաժեշտությունը՝ ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը որոշում է.

Սահմանել, որ միութենական հանրապետությունները կարող են անմիջական կապեր հաստատել արտասահմանյան պետությունների հետ և նրանց հետ համաձայնագրեր կնքել»[2]:

ԽՍՀՄ Սահմանադրությունում լրացումներ կատարվեցին օտարերկրյա պետությունների հետ միութենական հանրապետությունների հարաբերություններում ընդհանուր կարգի հաստատման մասին. յուրաքանչյուր միութենական հանրապետություն իրավունք ուներ անմիջական կապեր հաստատել արտասահմանյան պետությունների հետ, նրանց հետ համաձայնագիր կնքել և փոխանակել դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցիչներ: Այսպիսով, թվում էր, թե վերականգնվում է միութենական հանրապետությունների արտաքին քաղաքական գործունեության իրավունքը:

Վերոհիշյալ օրենքի ընդունումից հետո համապատասխան փոփոխություններ կատարվեցին միութենական բոլոր հանրապետությունների, այդ թվում Խորհրդային Հայաստանի սահմանադրությունում:

---

[1] Տե՛ս Худавердян К. С., Культурные связи Советской Армении: Краткий исторический очерк, Е., 1977, с. 102-103:

[2] Сборник законов СССР и указов Президиума Верховного Совета СССР: 1938-1975. Том 1, М., 1975, с. 51.

Հիմք ընդունելով ԽՍՀՄ Գերագույն խորհրդի փետրվարի 1-ի օրենքը՝ 1944 թ. մարտի 18-ին Հայկական ԽՍՀ-ի առաջին գումարման Գերագույն խորհուրդն ութերորդ նստաշրջանում Հայկական ԽՍՀ արտաքին գործերի միութենական-հանրապետական ժողովրդական կոմիսարիատ ստեղծելու մասին օրենք ընդունեց[1]: Հայկական ԽՍՀ Սահմանադրության մեջ ևս կատարվեցին համապատասխան լրացումներ, ըստ որի՝ Հայկական ԽՍՀ-ն իրավունք ուներ անմիջական կապեր հաստատել արտասահմանյան պետությունների հետ, կնքել համաձայնագրեր, փոխանակել դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչություններ: Արտգործժողկոմատը ղեկավարելու էր արտասահմանյան պետությունների հետ Հայկական ԽՍՀ հարաբերությունները՝ ելնելով օտարերկրյա պետությունների հետ միութենական հանրապետությունների կապերի՝ ԽՍՀՄ-ի կողմից ընդհանուր սահմանված կարգից[2]:

Օրենքում մատնանշվում էր միութենական հանրապետությունների՝ օտար պետությունների հետ անմիջական հարաբերություններ հաստատելու անհրաժեշտությունը: Հանրապետությունների ազգային խնդիրները կարող էին բավարարվել միայն օտարերկրյա պետությունների հետ անմիջական հարաբերությունների միջոցով:

Խորհրդային ղեկավարության առաջ քաշած փաստարկներն արժանահավատ էին թվում և մեծ հույսեր արթնացնում: Բայց և այնպես ապագան ցույց տվեց, որ խորհրդային ղեկավարությունն ի սկզբանե իր առջև նպատակ չէր դրել լուծելու մատնանշվող խնդիրները, այլ նպատակ ուներ միութենական հանրապետությունների իրավունքների ընդլայնումը նախևառաջ ծառայեցնել երկրի արտաքին քաղաքական շահերին, ամրապնդել ԽՍՀՄ-ի միջազգային դիրքերը: Խորհրդային Միությանն առավելապես հետաքրքրում էր ի հաշիվ միութենական հանրապետությունների Միավորված ազգերի կազմակերպությունում (ՄԱԿ) շատ ձայներ ունենալը: Հույս ուներ խորհրդային բոլոր հանրապետությունները դարձնել ՄԱԿ-ի անդամ, ինչը, սակայն, հաջողվեց միայն Ուկրաինայի և Բելառուսի դեպքում: Երկրորդ համաշխարհայինի ավարտին մեծ տերություններն իրենց ամբողջ ուշադրությունը կենտրոնացրել էին պատերազմի արդյունքների ամփոփման վրա և փորձում էին օգտագործել բոլոր դիվանագիտական լծակներն ընթացող բանակցային գործընթացներից լավագույնս շահած դուրս գալու համար:

Հարկ է նկատել, որ ՄԱԿ-ում իրենց անդամակցության շնորհիվ միութենական հանրապետություններին տրված լիազորություններից որոշ չափով օգտվեցին միայն Ուկրաինան և Բելառուսը, որոնք, ընդգրկվելով ՄԱԿ-ի կառույցների կազմում, սկսեցին մասնակցել կազմակերպության աշխատանքներին[3]: Բացի այդ, ԽՍՀՄ-ում այդ ժամանակ թե՛ գործնականում, թե՛ տեսականորեն զգալի տարբերություն էին տեսնում «միջազգային պայմանագիր» և «միջազգային համաձայնագիր» հասկացությունների միջև: Դա նշանակում էր, որ միութենական հանրապետությունները

---

[1] Տե՛ս Советская Армения в годы Великой отечественной войны (1941-1945)., сборник документов и материалов, Е., 1975, с. 277:

[2] Նույն տեղում, с. 278.

[3] Տե՛ս Белорусская ССР в международных отношениях . Международные договоры, конвенции и соглашения Белорусской ССР с иностранными государствами (1944-1959), Минск, 1960, с. 18-19, Кремнев П. П., К вопросу о самостоятельности советских союзных республик в международных отношениях , "Конституционное и муниципальное право", 2009, N 9, տե՛ս http://www.center-bereg.ru/o3662.html:

իրավասու էին կնքելու միայն համաձայնագրեր: Այսպիսով, կարող ենք փաստել, որ արտաքին հարաբերություններ հաստատելու մասին օրենքը միութենական հանրապետություններում այդպես էլ գործնական հողի վրա չդրվեց: ԽՍՀՄ տարածքում գտնվող օտարերկրյա պետությունների դիվանագիտական ներկայացուցչությունների հետ կապերը պետք է հաստատվեին միայն ԽՍՀՄ Արտաքին գործերի նախարարության միջոցով ու համաձայնությամբ: Վերը նշվածի անուղղակի ապացույց կարելի է համարել այն, որ ԽՍՀՄ Արտաքին գործերի նախարարությունում ընդհանրապես բացակայում էր հանրապետությունների արտաքին գործերի նախարարությունների գործունեությունը համակարգող որևէ մարմին[1]:

Ընդունված օրենքը նպատակ էր հետապնդում ԽՍՀՄ-ում և արտերկրում բոլորին հավաստիացնել, թե միութենական հանրապետությունները ինքնիշխան են: Բացի այդ, Խորհրդային Միության ղեկավարներն ակնկալում էին պատերազմի ավարտին մոբիլիզացնել ժողովրդի ուժերը, ստանալ նաև Հայկական սփյուռքի աջակցությունը, բարձրացնել երկրի վարած քաղաքականության նկատմամբ վստահությունը: Գաղտնիք չէ, որ պատերազմի հաղթական ավարտը հայությանն իր ազգային խնդիրների լուծման հույսեր էր ներշնչում: Ի վերջո, հաղթական պատերազմն օրակարգ էր բերում Թուրքիայի կողմից բռնազավթված հայկական որոշ տարածքների վերադարձի հարցը: Այն սերտորեն կապված էր 1944 թ. վերջից Սփյուռքի կողմից բարձրացվող հայերի հայրենադարձության խնդրի հետ, ինչին օժանդակում էր Խորհրդային Հայաստանը՝ հարցը բարձրացնելով ԽՍՀՄ կառավարության առաջ: Ցավոք, հայկական տարածքների ետբերման հարցում խորհրդային դիվանագիտությունն այդպես էլ հաջողության չհասավ[2]:

Այսուհանդերձ, օրենքի ընդունումը Հայկական ԽՍՀ-ի համար դրական քայլ կարելի է համարել: Ճիշտ է՝ արտգործժողկոմատին տրված լայն լիազորություններն այդպես էլ գործնական նշանակություն չունեցան, սակայն դրա ստեղծումը լրացուցիչ խթան դարձավ Խորհրդային Հայաստանի՝ արտասահմանյան պետությունների հետ արտաքին գիտական և մշակութային կապերի հաստատման համար:

1944-1947 թթ. ՀԽՍՀ Արտաքին գործերի նախարարությունն ուներ հետևյալ կառուցվածքը. նախարարի (մինիստրի) քարտուղարություն, քաղաքական բաժին, հյուպատոսական-անձնագրային բաժին, կադրերի բաժին և գաղտնի բաժին: 1946 թ. մարտի 15-ի ԽՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով ժողովրդական կոմիսարիատները վերանվանվում են նախարարություններ (մինիստրություններ): 1947 թ. տվյալներով՝ նախարարությունն ուներ 43 աշխատող, որից դիվանագիտական աշխատակազմը՝ 20, իսկ վարչական-տեխնիկականը՝ 23 մարդ[3]: 1944 թ. Արտգործժողկոմատը դիմեց ԽՍՀՄ արտաքին գերատեսչության ղեկավարությանը դիվանագիտական կրթությամբ մասնագետների պատրաստման համար 1944/1945 թթ. ուսումնական տարում Երևանի պետական համալսարանում միջազգային հարաբերությունների ֆակուլտետ ստեղծելու խնդրանքով[4]: Ֆակուլտետի շրջանավարտնե-

---

[1] Кремнев П. П., նշվ. աշխ., տե՛ս http://www.center-bereg.ru/o3662.html:

[2] Տե՛ս Хачатрян К. Г., Армянский вопрос и репатриация армян в Советскую Армению в 1945-1949 гг., “Историческое пространство. Проблемы истории стран СНГ”, М., 2007, № 2. с. 126:

[3] Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), Ֆ. 326, ց. 1, գ. 154, թ. 1:

[4] Տե՛ս նույն տեղում, գ. 13, թ. 3:

ը հետագայում արտաքին կապերի ոլորտում պաշտոններ զբաղեցրին: ՀԽՍՀ Արտգործժողկոմատը մեծ ջանք թափեց հատկապես ինֆորմացիայի հավաքման համար. աշխատակիցները հաշվետվություններ, տեղեկանքներ և զեկուցումներ էին պատրաստում տարբեր երկրների հայկական համայնքների, տեղերում հայերի թվի, նրանց դրության, սոցիալ-քաղաքական դիրքի, արտասահմանյան հայ մամուլի, հայկական կազմակերպությունների, սփյուռքի քաղաքական տարբեր ուժերի, ինչպես նաև հայկական հարցի վերաբերյալ: Միաժամանակ, ինչպես նշվեց, այդ տարիներին որոշակի ոգևորություն էր նկատվում սփյուռքահայության շրջանում. հայկական հարցը լուծելու, հայկական հողերի վերադարձի, հայրենադարձության կազմակերպման խնդրանքով սփյուռքից ստացվում էին բազմաթիվ նամակներ[1]: Դրան զուգահեռ՝ ՀԽՍՀ ձեռքբերումների մասին արտերկրում իրազեկելու նպատակով արտգործնախարարությունը ջանքերը կենտրոնացրել էր քարոզչական դաշտում:

Արտաքին մշակութային և գիտական գործունեության ոլորտում զգալի էր ԱԳՆ քաղաքական բաժնի կատարած աշխատանքը: Այն վերահսկողություն էր սահմանում ինչպես հանրապետությունում լույս տեսնող պարբերական հրատարակությունների, առանձին գրքերի և բրոշյուրների վրա, այնպես էլ ուշադրության կիզակետում էր պահում այն ռադիոհաղորդումներն ու հրապարակային դասախոսությունները, որոնցում շոշափվում էին արտաքին քաղաքական խնդիրներ կամ լուսաբանվում էին օտարերկրյա պետությունների արտաքին ու ներքին զարգացումներին առնչվող հարցեր: Բացի վերահսկողությունից որոշ դեպքերում հենց քաղաքական բաժինն էր նյութեր նախապատրաստում և հրատարակում ամսագրերում: Այս առումով քաղաքական բաժնի աշխատանքը համակարգված բնույթ ընդունեց 1946 թ. փետրվարին, երբ Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմի բյուրոյի որոշմամբ Հայկական ԽՍՀ ԱԳՆ Քաղաքական բաժնին կից ստեղծվեց մամուլի բյուրո[2]: Մամուլի բյուրոն հետևում էր, որ արտասահման ուղարկվող նյութերում «ճիշտ» արտացոլվեին տնտեսության ու մշակույթի ոլորտներում Խորհրդային Հայաստանի և ամբողջ Խորհրդային Միության ձեռքբերումները, վառ գույներով նեկայացվեր Խորհրդային Հայաստանի գիտության ու արվեստի նվաճումները: Նորաստեղծ մարմնին հանձնարարված էր նաև վերահսկել, որ արտաքին քաղաքական թեմաներ շոշափող նյութերում իրադարձությունների լուսաբանումը համապատասխաներ երկրի և կառավարության վարած քաղաքականությանը[3]:

Արտգործնախարարության քաղաքական բաժինը գրաքննում էր ինչպես գիտական, այնպես էլ գեղարվեստական գրականությունը: Բաժնի կարծիքին ներկայացված գրքերից էին, օրինակ, Գ. Ստեփանյանի «Մղձավանջային օրեր» և Գ. Սևունցի «Թափառաշրջիկներ» գրքերը. եթե առաջինը խմբագրումից հետո հրատարակվեց, ապա երկրորդի տպագրությունն արգելվեց[4]: Հատկապես մեծ ուշադրություն էր դարձվում արտերկիր ուղարկվող գրքերին: Օրինակ, պրոֆեսոր Ա. Ջիվելեգովի «Թուրքիան և Հայաստանը» գիրքը հրատարակությունից առաջ եզրակացության էր

[1] Տե՛ս նույն տեղում, գ. 30, 40, 47, 59, 60, 65, 69, 73, 77, 90, 93:
[2] Տե՛ս նույն տեղում, գ.172, թ. 5:
[3] Նույն տեղում, գ. 202, թ. 9:
[4] Նույն տեղում, գ.172, թ. 7:

ներկայացվել քաղաքական բաժնի մամուլի բյուրո, որը հայտնաբերելով բազմաթիվ թերություններ՝ առաջարկեց վերախմբագրել և կրկին քննարկման ներկայացնել[1]:

Հետպատերազմյան տարիներին հատուկ կարևորություն էր տրվում մամուլի վերահսկողությանը: Խորհրդային Միության համար կարևորագույն նշանակություն ունեցող այս ոլորտն արդյունավետ վերահսկելու և գաղափարախոսական գծից շեղումներ թույլ չտալու նպատակով քաղաքական բաժինն իրականացնում էր երեք հիմնական գործառույթ. աշխատանք արտասահմանյան մամուլի հետ, աշխատանք արտասահման ուղարկվող կամ միջազգային քաղաքականության հարցեր շոշափող նյութերի հետ և Խորհրդային միության հեռագրային գործակալության (ԽՄՀԳ) նյութերի վերահսկում[2]:

Արտասահմանյան երկրների հետ գիտամշակութային կապերի հաստատման և զարգացման համար հատկապես կարևոր իրադարձություն էր 1944 թ. «Արտասահմանյան երկրների հետ բարեկամության և մշակութային կապի հայկական ընկերության» (ԱՕԿՍ) ստեղծումը, որը մինչև «Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի» հիմնումը զբաղվում էր նաև Սփյուռքին առնչվող հարցերով: ԱՕԿՍ-ը ստեղծվել էր ՀԽՍՀ Արտգործնախարարության նախաձեռնությամբ սփյուռքահայերի հետ հարաբերությունների ամրապնդման և օտարերկրյա պետությունների հետ բարեկամական հարաբերությունների հաստատման նպատակով[3]: 1945 թ. երկրորդ կեսից ԱՕԿՍ-ը սկսեց տպագրել «Սովետական Հայաստան» ամսագիրը, որն ընկերության օրգանն էր: Ամսագիրը 1600 օրինակով ուղարկվում էր 19 երկրներ[4]: ԱՕԿՍ-ը մեծ քարոզչական աշխատանք էր իրականացնում. արտասահման էին ուղարկվում հոդվածներ, լուսանկարներ, հուշագրություններ, քաղաքական նյութեր ու գեղարվեստական գրականություն, թերթեր և ամսագրեր: Հետպատերազմյան տարիներին ՀԽՍՀ ծավալած մշակութային և գիտական արտաքին գործունեությունը հիմնականում իրականացվում էր ԱՕԿՍ-ի միջոցով, որը համագործակցում էր ինչպես Սփյուռքի, այնպես էլ օտարերկրյա ոչ հայկական կազմակերպությունների հետ, նամակագրություն էր պահպանում օտարերկրացի հասարակական ու մշակութային գործիչների հետ:

Ուստի բնավ պատահական չպիտի համարել, որ նախարարության քաղաքական բաժնի աշխատանքում հատուկ տեղ էր զբաղեցնում հենց ԱՕԿՍ-ի գործունեության վերահսկումը: Ընկերության աշխատանքային պլանը նախապես քննարկվում էր քաղաքական բաժնում, այնուհետ հաստատվում արտաքին գործերի նախարարի կամ տեղակալի կողմից[5]:

Օտարերկրյա մշակութային ու հասարակական կազմակերպությունների և անհատների հետ ԱՕԿՍ-ի ամբողջ նամակագրությունը, ինչպես նաև ԱՕԿՍ-ի՝ այլ երկրներ ուղարկելու համար նախատեսված բոլոր նյութերը նախապես ստուգվում էին ՀԽՍՀ Արտաքին գործերի նախարարության քաղաքական բաժնում: 1946 թ. փետրվարից մինչև 1947 թ. մարտ ընկած հատվածում քաղաքական բաժնի մամուլի

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում, թ. 1:
[3] Տե՛ս, նույն տեղում, ց. 3, գ. 4, թ. 9:
[4] Նույն տեղում, ֆ. 709, ց. 9, գ. 128, թ. 3:
[5] Նույն տեղում, ֆ. 326, ց. 1, գ.172, թ. 7:

բյուրոն քննել է 472 հոդված, զեկուցումների համար բազում նյութեր, ինչպես նաև մեծ թվով նամակներ, հուշեր, բազմաբնույթ ստեղծագործություններ, մի քանի ֆոտոցուցահանդեսներ, մեծ քանակությամբ գրքեր և բրոշյուրներ[1]:

Սրանով կարող ենք փաստել, որ ՀԽՍՀ Արտաքին գործերի նախարարությունը կատարում էր գիտամշակութային կապերի վերահսկողության ու կարգավորման գործառույթ, քանզի հենց ԱՕԿՍ-ի միջոցով էր հաստատվում հիմնական համագործակցությունն արտասահմանի հետ: Բնականաբար, սա չի նշանակում, թե Արտգործնախարարությունը վերահսկում էր միայն ԱՕԿՍ-ի գործունեությունը. նախարարությունը վերահսկում էր բոլոր այն կառույցները, որոնք կապ էին պահպանում օտարերկրյա պետությունների հետ:

Հանրապետության միջազգային գիտական կապերում, որն ինքնին ԽՍՀՄ միջազգային գիտական կապերի բաղադրիչն էր, առաջատար դեր էր խաղում ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիան[2]: Գիտական և մշակութային համագործակցության ոլորտում կարևոր էր նաև լուսավորության, մշակույթի նախարարության, Երևանի պետական համալսարանի, Մատենադարանի, հանրապետության մյուս գիտական և մշակութային հաստատությունների դերը:

Բացի վերահսկողության գործառույթից ՀԽՍՀ Արտգործնախարարության ղեկավարության հանձնարարությամբ ԱՕԿՍ-ը Հայաստան այցելած գործիչների մասնակցությամբ կազմակերպում էր միջոցառումներ, մամուլի ասուլիսներ, հարցազրույցներ[3]: Արտաքին գործերի նախարարությունը զբաղվում էր նաև այն քաղաքացիների արտասահմանյան անձնագրերի և վիզաների ձևակերպման խնդիրներով, որոնք պետք է Հայաստանից ուղևորվեին օտարերկրյա պետություններ, հատկապես «Վարշավայի պայմանագրի կազմակերպության» երկրներ: Նախարարությունը աջակցում էր բազմաթիվ պատվիրակությունների և հասարակական գործիչներին, գրողներին, նկարիչներին, մարզիկներին՝ մեկնելու արտասահման: Վերջիններս արտասահման էին մեկնում օտարերկրյա հայկական կազմակերպությունների և ընկերությունների հրավերով: Ակտիվ նամակագրություն էր վարում ԽՍՀՄ դեսպանությունների և հյուպատոսարանների հետ, քննարկում ականավոր հայ գործիչների, գրողների, մշակույթի ու արվեստի ոլորտի ներկայացուցիչների՝ Հայաստան ժամանելու հարցերը, նաև հանրապետության բուհերում հայ ուսանողների սովորելու, ուսուցիչների վերապատրաստման դասընթացներին օտարերկրյա հայ ուսուցիչների մասնակցության հարցերը: Նա ապահովում էր խորհրդային և օտարերկրյա քաղաքացիների մուտքի և ելքի վիզաների ստացումը[4]:

ՀԽՍՀ Արտաքին գործերի նախարարությունը մեծ ուշադրություն էր դարձնում օտարերկրացիների՝ հանրապետություն ժամանելու ծրագրին:

ՀԽՍՀ Արտաքին գործերի նախարարության միջոցով այլ երկրների հետ գիտամշակութային կապեր հաստատելու շնորհիվ տարեցտարի աճում էին օտարերկրացի գիտնականների և մշակութային գործիչների այցելությունները Հայաստան: Սակայն թե՛ օտարերկրացի, թե՛ հայ գործիչների ելքն ու մուտքը խստորեն վե-

---

[1] Նույն տեղում, թ. 8:
[2] Տե՛ս Худавердян К. С., նշվ. աշխ., с. 104:
[3] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. 326, ց. 1, գ. 172, թ. 9:
[4] Նույն տեղում, ց. 3, գ. 4, թ. 17:

ռահսկվում էր Մոսկվայի կողմից: Կարևոր որոշումներ կայացնելու կամ որևէ հարցում թույլտվություն ստանալու համար Խորհրդային Հայաստանի իշխանությունները դիմում էին ԽՍՀՄ Արտաքին գործերի մինիստրությանը: Այսպես, օրինակ՝ 1946 թ. ՀԽՍՀ մինիստրների խորհուրդը դիմում է ԽՍՀՄ Արտգործնախարարությանը՝ խնդրելով թույլ տալ որոշակի գումար տրամադրել Իտալիա գործուղված ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի ներկայացուցիչներին՝ հին հայկական ձեռագրերի լուսապատճենահանման և այլ ծախսերի համար[1]:

Կարող ենք արձանագրել, որ չնայած արտաքին գործերի գերատեսչության ստեղծմանը՝ ՀԽՍՀ-ն այդպես էլ լիարժեք արտաքին քաղաքական գործունեություն չծավալեց, քանի որ չէր հանդիսանում միջազգային հարաբերությունների ինքնուրույն սուբյեկտ: Փոխարենը հետպատերազմյան տարիներին սկսեց մեծ թափ ստանալ մշակութային և գիտական համագործակցությունը, արտասահմանյան երկրների հետ Խորհրդային Հայաստանի մշակութային ու գիտական առնչությունները դարձան բազմաբնույթ ու ընդգրկուն: Թեև Արտաքին գործերի նախարարությունը նվազ չափով էր մասնակցում հանրապետության մշակութային ու գիտական կապերի հաստատմանը, սակայն ստանձնել էր այդ կապերի վերահսկողության գործառույթը: Այսպիսով, 1940-ական թթ. վերջերից հիմքեր ստեղծվեցին հանրապետության արտաքին գիտամշակութային գործունեության հետագա ծավալման համար: Այս նախադրյալների հիման վրա էլ հետագա տարիներին արտասահմանյան երկրների հետ Խորհրդային Հայաստանի գիտամշակութային կապերը մեծ զարգացում ապրեցին:

Сильва Геворгян, Создание Наркомата иностранных дел Советской Армении в 1944 г. как импульс установления научных и культурных связей республики с иностранными государствами, - Создание Наркомата иностранных дел Советской Армении в 1944 г. во многом способствовало расширению научных и культурных связей республики с иностранными государствами. Несмотря на то, что широкие политические полномочия данные министерству иностранных дел так и не были выполнены, но оно контролировало и направляло сферу внешних отношений. Совместные усилия Министерства иностранных дел и других научных и культурных учреждений стали стимулом для развития научных и культурных связей Армении с зарубежными странами в последующие годы.

Silva Gevorgyan, The Establishment of the People's Commissariat for Foreign Affairs of Soviet Armenia in 1944 as an Impulse for Setting up Scientific and Cultural Relations of the Republic with Foreign Countries, - The establishment of the People's Commissariat for Foreign Affairs of Soviet Armenia in 1944 greatly contributed to the strengthening of the scientific and cultural relations of the republic with foreign countries. Despite the fact that the huge political mandate given to the Ministry of Foreign Affairs wasn't implemented, it controlled and directed the sphere of external relations. The joint efforts of the Ministry of Foreign Affairs and other scientific and cultural institutions gave impetus to the development of scientific and cultural ties between Armenia and foreign countries in the following years.

Սիլվա Գևորգյան - ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ասպիրանտ:

[1] Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 110: